



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2017 թ. հուլիսի 31-ի թիվ 19/1

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ԵՎ «ԴԻԼԻՋԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-ՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՆԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի գ) կետի, ինչպես նաև ՀՀ վերահսկիչ պալատի 2017 թվականի գործունեության տարեկան ծրագրի 1-ին կետի 1.3 ենթակետի դրույթներով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Իրականացնել վերահսկողություն՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան ազգային պարկ» և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ներին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, բյուջետային մուտքերի ապահովման և պետական սեփականության կառավարման նկատմամբ:

2. Հաստատել՝

ա) վերահսկվող օբյեկտները՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ, «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ,

բ) վերահսկողության ձևերը՝ դիտարկում և վերլուծություն,

գ) վերահսկողության տեսակները՝ ֆինանսական, համապատասխանության և արդյունավետության (կատարողական),

դ) վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև վերահսկողության իրականացման ժամկետի ավարտը,

ե) վերահսկողության կատարման ժամկետը՝ 2017 թվականի օգոստոսի 7-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը,

3. Վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձինք՝

Հաստատել թեմայի հանձնառու իրավաբանական վարչության վերահսկողություն իրականացնող հանձնաժողովի պաշտոնատար անձանց հետևյալ կազմը.

Հանձնաժողովի նախագահ,
Իրավաբանական վարչության պետ՝

Արամ Մամիկոնյան

Վարչության պետի տեղակալ

Մուշեղ Սաֆարյան

Վարչության պետի խորհրդական

Հովհաննես Հովհաննիսյան

Գլխավոր մասնագետներ՝

Էմիլ Գյոժգյան

Լևոն Հարությունյան

Մասնագետ՝

Լուսինե Մինասյան

Իրավաբանական վարչության աշխատանքները
համակարգող խորհրդի անդամ՝

Գագիկ Մկրտումյան:

«ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱԿ



Լ. ՅՈՒՅԱՆ